ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA
EU4Youth

Save the Children

oxYGen

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ

Սույն տեղեկատվական գրքույկը իր մեջ զետեղում է «Հնարավորություններ երիտասարդներին» տոնավաճառին մասնակցություն ունեցած մի շարք կազմակերպությունների կողմից երիտասարդներին առաջարկվող հնարավորությունները:

Տոնավաճառը կազմակերպվել է «ԵՄ-ն հանուն երիտասարդության՝ հմտություններ ապագայի համար» տարածաշրջանային ծրագրի (2018-2020թթ.) շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսավորմամբ հետևյալ երեք երկրներում՝ Հայաստան, Վրաստան և Ուկրաինա: Հայաստանում այն իրականացվում է «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության կողմից՝ ՕքսԵՋեն երիտասարդների և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամի հետ համագործակցաբար:

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:

Բովանդակության համար պատասխանատվություն են կրում տեղեկատվությունը տրամադրած կազմակերպությունները, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները: Սեյվ դը չիլդրեն Հայաստանը և ՕքսԵՋեն հիմնադրամը պատասխանատվություն չեն կրում ներկայացված բովանդակության և առաջարկվող հնարավորությունների համար:

ԵՐԵՎԱՆ 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ 4

ԱՄՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՐՊՈՒՍ ՀԱՅԱՍՏԱՆ 5

ԳՅՈՒՄՐՈՒ «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ 6

«ԴԱՍԱՎԱՆԴԻ՛Ր, ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ 7

DASARAN ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ 8

ԵՊՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ 9

ԵՐԵՎԱՆԻ Վ.ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ 10

ԵՐԵՎԱՆԻ Վ.ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ 11

«ԷՌԱ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ 12

ԻՄՓԱՔԹ ՀԱԲ ԵՐԵՎԱՆ 13

ԻՐԻՍ ԲԻԶՆԵՍ ԻՆԿՈՒԲԱՏՈՐ 14

«ԿԱՋԱ» ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ 15

ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ 16

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ 17

ՀԱՅ ԱՌԱՋԱԴԵՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ ՀԿ 18

«ՀԿ ԿԵՆՏՐՈՆ» ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԿ 19

ՄԱԿ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ «ԿԱՆԱՅՔ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ» ԾՐԱԳԻՐ 20

ՄԱԿ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ ԿՈԼԲԱ ԼԱԲ 21

ՄԵԴԻԱ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ 22

ՍԻՆԵՐՋԻ ԻՆԹԵՐՆԵԾՆԼ ՍԻՍԹԵՄԶ 23

staff.am 24

«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅԾՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ 25

Կազմակերպության մասին

Ամերիկյան խորհուրդները, լինելով միջազգային կրթության, ակադեմիական փոխանակման և օտար լեզուների ուսումնասիրման բնագավառներում առաջատար կազմակերպություն, հնարավորություն է ստեղծում անհատների և հաստատությունների համար՝ հաջողության հասնելու սերտորեն փոխկապակցված աշխարհում: Ամերիկյան խորհուրդների հայաստանյան գրասենյակը հիմնադրվել է 1996թ.-ին: Այս ժամանակահատվածում Ամերիկյան խորհուրդները Հայաստանում իրականացրել է ԱՄՆի կառավարության կողմից հովանավորվող տասնյակ ծրագրեր՝ հնարավորություն տալով ավելի քան 1400 աշակերտների, ուսանողների, դասախոսների և վարչական աշխատակիցների սովորելու և մասնագիտական վերապատրաստում անցնելու ԱՄՆ-ի ուսումնական հաստատություններում:

Հնարավորություններ

Օրենսդրական ոլորտի մասնագետների ծրագիր /PFP/

Օրենսդրական ոլորտի մասնագետների ծրագիրը /PFP/ Օրենսդրական ոլորտի մասնագետների ծրագիրը կարճաժամկետ մասնագիտական վերապատրաստման փոխանակման ծրագիր է ԱՄՆ-ում, որը հնարավորություն է ընձեռնում խոստումնալից երիտասարդ մասնագետներին ծանոթանալու և գործնական փորձ ձեռք բերելու ԱՄՆ-ի կառավարական մարմիններում: PFP-ն ներգրավում է մասնագետների, ովքեր աշխատելով պետական մարմիններում, քաղաքացիական կրթության հաստատություններում, քաղաքացիների շահերի պաշտպանության միություններում, ընտրական գործընթացը վերահսկող կազմակերպություններում կամ ՀԿ-ներում՝ ակտիվ ընգրկված են օրենսդրական և/կամ քաղաքականության մշակման գործընթացում: Ծրագրի մեկնարկից՝ 2012թ-ից ի վեր, PFP մրցույթին Հայաստանից մասնակցել է 900 դիմորդ, որոնցից 40-ն ընտրվել և մեկնել են վերապատրաստվելու ԱՄՆ-ի 12 նահանգներում: PFP ծրագրի շրջանավարտները վերադառնալուց հետո իրենց ամերիկյան գործընկերների հետ համատեղ Հայաստանում իրականացրել են 22 մասնագիտական նախագծեր:

Ապագա առաջնորդների փոխանակման ծրագիր /FLEX/

Այս ծրագիրը 9-12-րդ դասարանի աշակերտներին տրամադրում է կրթաթոշակ՝ հնարավորություն տալով մեկ ուսումնական տարի անցկացնել ԱՄՆ-ում՝ ապրելով ամերիկյան հյուրընկալող ընտանիքում և հաճախելով ամերիկյան դպրոց: 1993թ.-ից ի վեր մրցութային կարգով ընտրված ավելի քան 1000 հայ աշակերտներ վերադարձել են Հայաստան՝ ունենալով ոչ միայն ամերիկյան մշակույթի, դեմոկրատական արժեքների մասին խոր գիտելիքներ և կամավորական աշխատանքների փորձ, այլև դրանք օգտագործելու մեծ ցանկություն՝ մյուսներին օգնելու համար:

EducationUSA

ԱՄՆ պետքարտուղարության կողմից հովանավորվող EducationUSA հայաստանյան գրասենյակը պատկանում է աշխարհում գոյություն ունեցող հարյուրավոր խորհրդատվական կենտրոնների ցանցին: Կենտրոնը դիմորդներին և ուսանողներին տրամադրում է ճշգրիտ, բազմակողմանի և արդի տեղեկատվություն՝ ԱՄՆ-ում քոլեջներ և համալսարաններ ընդունվելու գործընթացի վերաբերյալ: Կենտրոնի բոլոր ծառայությունները՝ ներառյալ թեստերին պատրաստվելու համար գրադարանից գրքեր տրամադրելը, անհատական խորհրդատվությունները, դասախոսությունները, աշխատաժողովները, փորձնական թեստերի հանձնումը, խմբակային խորհրդատվությունները և տարածաշրջանային այցելությունները տրամադրվում են անվճար:

ԱՄՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՐՊՈՒՍ ՀԱՅԱՍՏԱՆ

Կազմակերպության մասին

ԱՄՆ Խաղաղության կորպուսը ստեղծվել է 1961 թվականին Ջոն Ֆ. Քենեդիի կողմից՝ աշխարհում խաղաղություն և ընկերություն ամրապնդելու նպատակով: ԱՄՆ Խաղաղության կորպուսը Հայաստանում գործում է 1992թ.-ից: Այդ ժամանակից ի վեր ավելի քան 1,000 ամերիկացի կամավոր է ծառայել Հայաստանի մարզերում: Կամավորներն իրենց գործունեությունն իրականացնում են հանրակրթական դպրոցներում և հասարակական կազմակերպություններում երկու ծրագրերի շրջանակներում՝ «Անգլերենը՝ որպես օտար լեզու» և «Համայնքի և երիտասարդության զարգացում»: Կամավորները Հայաստանում ապրում և աշխատում են 27 ամիս, սովորում են հայերեն, ծանոթանում հայ մշակույթին և իրականացնում տարաբնույթ մրցույթներ, ակումբներ և ճամբարներ:

Հնարավորություններ

Փորձնակներ

Աշխատանքի ընթացքում փորձնակները ձեռք կբերեն միջազգային կազմակերպությունում աշխատելու փորձ: Փորձնակի հիմնական պարտականությունն է աջակցել Խաղաղության կորպուսի անձնակազմին գրասենյակային աշխատանքների կազմակերպման, միջոցառումների, համաժողովների և հանդիպումների ժամանակ անհրաժեշտ նյութերի և փաթեթների պատրաստման, ֆինանսական հաշվետվություններ կազմելու, թարգմանությունների և նմանատիպ այլ աշխատանքներ իրականացման հարցում:
Պարտադիր է, որ փորձնակը տիրապետի համակարգչային ծրագրերի, կարողանա աշխատել սահմանված վերջնաժամկետների պայմաններում և ծանրաբեռնված աշխատանքային գրաֆիկով, ունենա կազմակերպչական, թիմային և գրասենյակային աշխատանքի փորձառություն ձեռք բերելու ցանկություն, գործնական հաղորդակցման հմտություններ և այլն:

Աշխատանքային ժամերը - Առավելագույնը շաբաթական 15 ժամ: Աշխատանքը հնարավոր է համատեղել ուսման հետ:
Տևողություն - 6 ամիս՝ ևս 6 ամիս երկարացնելու հնարավորությամբ:
Վարձատրություն - Խաղաղության կորպուսը փորձնակները ստանում են 700 դրամ ժամավճար:
Կրթություն - Առաջինից-չորրորդ կուրսերում ուսումնառող ուսանողներ: Այն դիմորդներն, ովքեր արդեն ստացել են բակալավրի և մագիստրոսի որակավորում չեն կարող մասնակցել:
Լեզուների իմացություն - Հայերեն և անգլերեն լեզուների գերազանց իմացություն:

ԳՅՈՒՄՐՈՒ «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ

Կազմակերպության մասին

Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը (ԵՆԿ) երիտասարդական ոլորտում ակտիվ կառույցներից է, որը հիմնադրվել է 2008թ. դեկտեմբերին և նպատակ ունի աջակցել երիտասարդների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանն ու նրանց հանրային դերի բարձրացմանը, խթանել նրանց նախաձեռնողականությունը:

Հնարավորություններ

«Erasmus+ *Երիտասարդություն» և «Եվրոպական Համերաշխության Կորպուս» ծրագրերի տեղեկատվական կենտրոն Հայաստանում*

2017թ-ից գործող կենտրոնի նպատակն է «Էրազմուս+ Երիտասարդություն» և «Եվրոպական Համերաշխության Կորպուս» ծրագրերի ընձեռած հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության և խորհրդատվության տրամադրումը երիտասարդներին և երիտասարդական կառույցներին, ինչպես նաև աջակցությունը շահագրգիռ կողմերին իրենց ծրագրերի իրականացման գործում:

«Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոն

Գյումրիում գործող «Երիտասարդների տունը» 13-18 տարեկան երիտասարդներին առաջարկում է երիտասարդական ծառայությունների լայն շրջանակ՝ ներառյալ կյանքի հմտությունների և աշխատանքային մրցունակության կարողությունների զարգացում, անհատական կամ խմբային խորհրդատվություն և այլն:

«Get a bike, get a life» *ՍԶ ծրագիր*

2019թ. հունվարից ԵՆԿ-ն իրականացնում է «Get a bike, get a life» սոցիալական ձեռնարկատիրության ծրագիրը, որի նպատակն է Գյումրիում զարգացնել հեծանվավարության մշակույթը, ստեղծել հեծանիվների վարձույթի համակարգ, ինչպես նաև տրամադրել զբոսաշրջային տարբեր ծառայություններ:

Այլ հնարավորություններ

ԵՆԿ-ն երիտասարդներին հրավիրում է նաև անդամակցել լեզվի ակումբներին, մասնակցել կենտրոնի կազմակերպած արշավներին, օգտվել Եվրամիության «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում ընձեռնվող միջազգային և կամավորական տարբեր ծրագրերի մասնակցելու հնարավորությունից:

«ԴԱՍԱՎԱՆԴԻ՛Ր, ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Կազմակերպության մասին

«Դասավանդի՛ր, Հայաստան»-ը կրթական հիմնադրամ է, որի նպատակն է Հայաստանի բոլոր երեխաներին անկախ նրանց գտնվելու վայրից ու սոցիալական պայմաններից ապահովել հավասար ու որակյալ կրթությամբ: «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի Առաջնորդության զարգացման ծրագրին միացած մեր մասնակիցների՝ Ուսուցիչ-առաջնորդների հետ միասին մենք ձգտում ենք լրացնել մարզային շատ դպրոցներում առկա ուսուցիչների պակասը, երեխաներին ապահովել գերազանց կրթությամբ, էական փոփոխություններ ու զարգացումներ բերել համայնքներում՝ բազմաբնույթ ծրագրերի իրականացման միջոցով, ինչպես նաև բացահայտել և էլ ավելի զարգացնել մեր Ուսուցիչ-առաջնորդների առաջնորդական հմտություններն ու գիտելիքները:

Հնարավորություններ

Առաջնորդության զարգացման ծրագիր

«Դասավանդի՛ր, Հայաստան»-ն իրականացնում է Առաջնորդության զարգացման ծրագիր: Ներգրավելով մեր շարժմանը տարբեր մասնագիտության տեր վառ անհատների՝ թե՛ Հայաստանից և թե՛ սփյուռքից, մենք վերապատրաստում ենք նրանց որպես Ուսուցիչ-առաջնորդների և տեղակայում ենք կարիք ունեցող մեր գործընկեր դպրոցներում և համայնքներում: Մենք ներդնում ենք ամեն ինչ՝ աջակցելու համար մեր Ուսուցիչ-առաջնորդներին իրենց երկամյա դասավանդման հանձնառության մեջ, որպեսզի նրանք հաջողեն որպես ուսուցիչներ և մենթորներ իրենց աշակերտների և որպես օրինակելի կերպարներ՝ իրենց համայնքների համար:

Ուսուցիչ-առաջնորդների Ակադեմիայի վերապատրաստման ծրագիրը հաջողությամբ ավարտելուց հետո Ուսուցիչ-առաջնորդները տեղաբաշխվում են համայնքներում՝ ըստ իրենց կրթական և մասնագիտական փորձառության, ինչպես նաև ելնելով մեր գործընկեր դպրոցների կարիքներից: Իրենց երկամյա գործունեության ընթացքում մասնակիցներն ապրում են համայնքներում և լրիվ դրույքով դասավանդում հանրակրթական դպրոցներում: Նրանք նաև իրականացնում են համայնքային զարգացման ծրագրեր՝ էական փոփոխություններ ու զարգացումներ բերելով տվյալ համայնքներում:

Ծրագրին մասնակցելու նվազագույն պահանջներն են 2020թ. հուլիս ամսվա դրությամբ բակալավրի աստիճանի առկայություն և հայերենի իմացություն:

Ծրագրի առավելություններ

- Հնարավորություն անվճար սովորելու և ստանալու մանկավարժի մագիստրոսի որակավարում Հայաստանի համալսարաններում: Ուսուցման վարձը վճարում է հիմնադրամը,
- Հնարավորություն մասնակցելու վերապատրաստումների, դասընթացների, մասնագիտական հանդիպումների,
- Մեր գործընկեր կազմակերպություններում մասնագիտական զարգացման հնարավորություն,
- Համախոհների և ծանոթությունների մեծ ցանցի ձեռք բերում,
- Ամսական դրամական աջակցություն,
- Մասնագիտական աճի հնարավորություն,
- Մարզային համայնքների զարգացմանը նպաստելու հնարավորություն,
- Նորարար մտքերը եւ նախագծերը իրականացնելու հարթակ,
- Առաջնորդության հմտությունների զարգացման հնարավորություն,
- Կարիերայի զարգացման հնարավորություն:

«Դասավանդի՛ր, Հայաստան»-ի Առաջնորդության զարգացման ծրագրին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել՝ լրացնելով հետևյալ առցանց հայտադիմումը:

DASARAN ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմակերպության մասին

Dasaran-ը կրթական համակարգ է, որի նպատակն է **տեխնոլոգիական լուծումների** միջոցով նպաստել կրթական ոլորտի բարեփոխմանը և թափանցիկության ապահովմանը, թափանցիկ գնահատման ու վերահսկման համակարգերի ներդրման միջոցով կրթության կառավարման արդյունավետության բարձրացմանը, հնարավոր կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, ինչպես նաև **ծնող-ուսուցիչ-աշակերտ կապի** ամրապնդմանը:

Dasaran-**ն ունի համապետական բնույթ և միավորում է Հայաստանի և Արցախի** 1,488 պետական հանրակրթական դպրոց՝ մեկ հարթակում ներառելով 1,214,409 գրանցված բաժանորդի (աշակերտ, շրջանավարտ, ծնող, ուսուցիչ և տնօրեն): Իր գործունեության ընթացքում Dasaran-ը ստեղծել է դպրոցների առցանց կառավարման համակարգ, աշակերտների առաջադիմության վերահսկման արդյունավետ և թափանցիկ մեխանիզմներ, ինչպես նաև մշակել E-Stat **առցանց վիճակագրական-վերլուծական գործիքը**, որը հնարավորություն է տալիս ընդգրկուն կերպով դիտարկելու ժողովրդագրական տվյալների դինամիկան, հանրակրթական համակարգի բոլոր շերտերը, վերլուծելու աշակերտների կատարողականը:

2016 թվականին Dasaran կրթական ծրագիրը Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (UNDP) կողմից ճանաչվել է **աշխարհի** 5 **լավագույն նորարարական ծրագրերից մեկը**:

Հնարավորություններ

Ուսումնական պրակտիկա Dasaran-ում

Dasaran-ը պարբերաբար կազմակերպում է մի քանի ամիս տևողությամբ ուսումնական պրակտիկաներ (internships) այն երիտասարդների համար, ովքեր սովորելու, որպես մասնագետ աճելու ու աշխատելու ցանկություն ունեն և քիչ թե շատ գլուխ են հանում հետևյալ ոլորտներից՝ վեբ ու մոբայլ դիզայն (UI/UX), Back-end ծրագրավորում կամ նախագծերի կառավարում (Project management): Նոր մասնագիտական ուղղություններ ևս կարող են ավելացվել՝ ըստ անհրաժեշտության:

Ինչ ենք առաջարկում.

- մասնագիտական վերապատրաստում,
- պրակտիկ գիտելիքներ,
- 10 տարում կուտակած փորձի փոխանակում,
- մասնակցություն իրական նախագծերի ստեղծման գործընթացներին,
- թիմի լիարժեք անդամ դառնալու հնարավորություն,
- հետագայում աշխատանքի անցնելու հնարավորություն:

Դիմելու համար անհրաժեշտ է փորձի և կատարած աշխատանքների մասին տեղեկատվությունն ուղարկել career@dasaran.am էլ.հասցեին:

ԵՊՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ

Կազմակերպության մասին

ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը ստեղծվել է 2006 թվականին՝ ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ: Կենտրոնն այժմ ակտիվ համագործակցում է ՀՀ շուրջ 100 պետական և մասնավոր ընկերությունների, ձեռնարկությունների, ինչպես նաև միջազգային տարբեր կազմակերպությունների հետ:
Կենտրոնի հիմնական նպատակն է աշխատաշուկայում համալսարանականների մրցունակության բարձրացրացումը, համալսարանի և տարբեր առաջատար կազմակերպությունների միջև կապի ապահովումն ու շարունակական համագործակցությունը:

Հնարավորություններ

Կենտրոնի գործունեության հիմնական ուղղություններն են՝

- սեմինար-դասընթացների կազմակերպում և խորհրդատվության տրամադրում ինքնակենսագրություն կազմելու, գործատուին ճիշտ ներկայանալու, կարիերայի կառուցման և արդի աշխատաշուկային վերաբերող այլ խնդիրների շուրջ ինթերնշիփ ծրագրեր (պրակտիկա),
- հանդիպումներ գործատուների հետ,
- կամավորական ծրագրերի իրականացում,
- շրջանավարտների տվյալների էլեկտրոնային բազայի ընդլայնում,
- համագործակցություն պետական և մասնավոր սեկտորի կազմակերպությունների հետ,
- շրջանավարտներին թափուր աշխատատեղերի և այլ հնարավորությունների մասին տեղեկացում,
- կարիերայի զարգացմանը նպաստող միջոցառումների, կլոր-սեղան քննարկումների կազմակերպում:

Էլեկտրոնային ռեսուրսներ

Ձեռնարկությունների հետ համագործակցության ինտերնետային պորտալ

ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կայք

Շրջանավարտներ Էլեկտրոնային հասցեների շտեմարան

ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի պաշտոնական էջերը (Facebook և LinkedIn) սոցիալական կայքերում

ԵՐԵՎԱՆԻ Վ.ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ

Կազմակերպության մասին

Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի Կարիերայի կենտրոնը ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է, որի հիմնական նպատակն է նպաստել ԵՊԼՀ-ի սովորողների ու շրջանավարտների զբաղվածության և կարիերայի աճի հնարավորությունների զարգացմանը, ինչպես նաև աշխատաշուկայում իրենց մրցունակության բարձրացմանը, ընդլայնել ԵՊԼՀ-ի համագործակցությունը գործատուների հետ՝ բազմազանեցնելով փոխգործակցության ձևերը և նպաստելով ՄԿԾ-երի արդիականացմանը և կրթության որակի բարձրացմանը, ամրապնդել շրջանավարտների, գործատուների և ԵՊԼՀ-ի միջև փոխներգործուն կապը:

Հնարավորություններ

ԵՊԼՀ-ի Կարիերայի կենտրոնը համալսարանի գործունեության կարևոր օղակներից է, որը նպաստում է յուրաքանչյուր ուսանողի հաջողությանը՝ իրականացնելով ուսանողների աջակցության տարատեսակ աշխատանքներ: Դրանցից են կարիերայի հնարավորությունների ուսումնասիրումը, աշխատանքի որոնմանն աջակցելը, աշխատանքի դիմելու նպատակով անձնական գործերի պատրաստումը, հարցազրույցներին նախապատրաստումը, աշխատանքի որոնման մեթոդների, մասնագիտական կողմնորոշման և այլ խնդիրների վերաբերյալ խորհրդատվական սեմինարների ու այլ միջոցառումների կազմակերպումը և այլն: Բացի այդ Կարիերայի կենտրոնը աջակցում է գործատուների հետ համագործակցության զարգացմանը, հաստատում մշտական հետադարձ կապ համալսարանի շրջանավարտների հետ և իրականացնում այլ գործառույթներ:

Եվրոպական համերաշխության կորպուս

ԵՊԼՀ-ի Կարիերայի կենտրոնը հանդիսանում է հյուրընկալող կազմակարպություն: Ծրագիրը եզակի հնարավորություն է տալիս 17-30 տարեկան երիտասարդներին Եվրոպայում կամավորություն անելու, ծանոթանալու տարբեր մշակույթների հետ, զարգացնելու նոր հմտություններ՝ միաժամանակ օգնելով ուրիշներին դառնալու ավելի ինքնավստահ և ինքնուրույն, բարելավելու լեզվական հմտությունները և այլն:

Էրազմուս+ «Համալսարան-ձեռնարկատիրություն համագործակցության և ուսանողների ձեռնարկատիրական հմտությունների ամրապնդումը ՍՄԱՐԹ կենտրոնների միջոցով» ՍՄԱՐԹ

ԱՄԱՐԹ ծրագրի թիրախային երկրներն են Հայաստանը, Մոլդովան և Բելառուսը: Ծրագրի հիմնական նպատակն է մոտիվացնել բուհերի ուսանողներին և շրջանավարտներին զարգացնել ձեռնարկատիրական հմտություններն ու կարողությունները, ակտիվացնել բուհ-գործատու համագործակցությունը ՍՄԱՐԹ կենտրոնների միջոցով: ԵՊԼՀ-ի ՍՄԱՐԹ կենտրոնի և Կարիերայի կենտրոնի աշխատանքներն ուղղված են երիտասարդների համար մեկ միասնական հարթակի ստեղծմանը, որը հնարավորություն կտա ներկայացնել նորարար գաղափարներ, ստարտ-ափ առաջարկներ ու ծրագրեր, հիմնել՝ բիզնես:

Ծրագրի շրջանակներում ԵՊԼՀ-ում գործում է ՍՄԱՐԹ կենտրոն, որի առաջնային նպատակն է աշխատել և աջակցել ուսանողներին, շրջանավարտներին, հետազոտողներին գաղափարների իրագործման գործընթացում, զագացնել շահառուների ձեռնարկատիրական հմտությունները, ինչպես նաև աշխուժացնել բուհ-գործատու համագործակցությունը:

ԵՐԵՎԱՆԻ Վ.ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ

Կազմակերպության մասին

Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի շրջանավարտների միավորում ՀԿ-ն հիմադրվել է 2007 թվականին: Միավորման հիմնական նպատակն է ԵՊԼՀ-ի շրջանավարտների և բուհի միջև ստեղծել սերտ կապեր և շարունակաբար ամրապնդել դրանք:

ԵՊԼՀ Շրջանավարտների միավորման նպատակներն են.

- ամրապնդել բուհի և շրջանավարտների միջև շարունակական կապը,
- նպաստել ԵՊԼՀ-ում կրթական և գիտական ծրագրերի իրականացմանը,
- քննարկել ԵՊԼՀ շրջանավարտներին հուզող հարցերը,
- իրականացնել տեղեկատվության և փորձի փոխանակում ՀՀ և արտերկրի նմանատիպ գործունեություն իրականացնող կազմակերպությունների հետ,
- քաջալերել շնորհալի երիտասարդներին և երիտասարդ մասնագետներին:

Հնարավորություններ

ԵՊԼՀ-ի Կարիերայի կենտրոնը համալսարանի գործունեության կարևոր օղակներից է, որը նպաստում է յուրաքանչյուր ուսանողի հաջողությանը՝ իրականացնելով ուսանողների աջակցության տարատեսակ աշխատանքներ: Դրանցից են կարիերայի հնարավորությունների ուսումնասիրումը, աշխատանքի որոնմանն աջակցելը, աշխատանքի դիմելու նպատակով անձնական գործերի պատրաստումը, հարցազրույցներին նախապատրաստումը, աշխատանքի որոնման մեթոդների, մասնագիտական կողմնորոշման և այլ խնդիրների վերաբերյալ խորհրդատվական սեմինարների ու այլ միջոցառումների կազմակերպումը և այլն: Բացի այդ Կարիերայի կենտրոնը աջակցում է գործատուների հետ համագործակցության զարգացմանը, հաստատում մշտական հետադարձ կապ համալսարանի շրջանավարտների հետ և իրականացնում այլ գործառույթներ:

Եվրոպական համերաշխության կորպուս

ԵՊԼՀ-ի Շրջանավարտների միավորում ՀԿ հանդիսանում է աջակցող կազմակերպություն: Ծրագիրը եզակի հնարավորություն է տալիս 17-30 տարեկան երիտասարդներին Եվրոպայում կամավորություն անելու, ծանոթանալու տարբեր մշակույթների հետ, զարգացնելու նոր հմտություններ՝ միաժամանակ օգնելով ուրիշներին դառնալու ավելի ինքնավստահ և ինքնուրույն, բարելավելու լեզվական հմտությունները և այլն:

Էրազմուս + Երիտասարդական փոխանակման ծրագրեր և հնարավորություններ երիտասարդական ոլորտի աշխատակիցների համար

ԵՊԼՀ-ի Շրջանավարտների միավորում ՀԿ հնարավորություն է ընձեռնում երիտասարդությանը և երիտասարդական աշխատողներին ներգրավված լինել և մասնակցել ոչ ֆորմալ կրթության ոլորտում իրականացնելով տարբեր դասընթացների և միջոցառումների՝ տեղական, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում:

«ԷՌԱ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ

Կազմակերպության մասին

«ԷՌԱ թեքնոլոջիս» ՍՊԸ ընկերությունը հանդիսանում է «Վոլտերման» խելացի դրամապանակների արտադրող ընկերությունը Հայաստանում: Այն ապահովում է ամբողջական ցիկլ՝ նոր IoT պրոդուկտի գաղափարից մինչև վերջնական արդյունք հասնելու համար:
Ընկերությունը «Վոլտերման» ապրանքանիշի խելացի դրամապանակները պատիվ է ունեցել ներկայացնել միջազգային տարբեր հարթակներում՝ Գերմանիայում, ԱՄՆ-ում, Քաթարում, Սինգապուրում և այլուր:
Ընկերությունը իր պրոյեկտների խողովակաշարում ունի տարբեր պրոդուկտներ, որոնք կարելի է գտնել ինչպես կայքում, այնպես էլ ֆեյսբուքյան էջում:

Հնարավորություններ

Պրակտիկա

Աշխատանքային նոր հնարավորություններ առաջանալու դեպքում ընկերությունը սիրով պատրաստ է համագործակցել երիտասարդների հետ: Ընկերությունը բաց է խելացի, նպատակասլաց և նոր բաներ սովորելու մեծ ցանկություն ունեցող երիտասարդների հյուրընկալել՝ որպես ուսնակ:

ԻՄՓԱՔԹ ՀԱԲ ԵՐԵՎԱՆ

Կազմակերպության մասին

Իմփաքթ Հաբ Երևանը սոցիալական նորարարական ինկուբատոր է, համայնք և տարածք, որն ունի առաքելություն աջակցելու սոցիալական դրական ազդեցություն ստեղծող ծրագրերին և ձեռնարկություններին: Իմփաքթ Հաբ Երևանում կան բիզնես ինկուբացիայի հնարավորություններ, որի շրջանակներում լավ գաղափարները ստանում են անվճար անդամություն և մասնագիտական աջակցություն ծրագրի իրանացման համար:
Ֆեյսբուքյան էջ՝ https://www.facebook.com/impacthubyerevan/

Իմփաքթ Հաբը միջազգային կազմակերպություն է, որը բաղկացած է շուրջ 100 Հաբերից ամբողջ աշխարհում՝ ունենալով մոտ 16,000 անդամներ:

Հնարավորություններ

Ինկուբացիա Իզմիրյան հիմնադրամի հետ

Իզմիրյան Հիմնադրամի և Իմփաքթ Հաբ Երևանի ինկուբացիոն ծրագիրն աջակցում է այն ձեռներեցներին, ովքեր նպատակ ունեն ստեղծելու ձեռնարկություն, որը լուծում է որևէ սոցիալական խնդիր: Առաջնայնություն կտրվի ծրագրերին հետևյալ ոլորտներում. կրթություն, առողջապահություն, զբոսաշրջություն և համայնքային զարգացում: Հայտերը բացվում են տարին երկու անգամ: Նորությունների համար հետևե՛ք ֆեյսբուքյան էջին կամ այս էջին:

Ինկուբացիա ԱԿԲԱ Ֆեդերացիա հետ

Սա մեկ տարի տևողությամբ ինկուբացիա է Իմփաքթ Հաբ Երևանում, որն աջակցում է ձեռնարկատերերին, ովքեր նպատակ ունեն նորարարական մոտեցումներով լուծելու գյուղատնտեսական խնդիրները Հայաստանում:
Նորությունների համար հետևե՛ք ֆեյսբուքյան էջին կամ այս էջին:

Այլ ծրագրեր

Իմփաքթ Հաբ Երևանում հաճախ տարբեր ծրագրեր են իրականացվում, որոնք լավ հնարավորություններ են առաջարկում երիտասարդների համար: Կարող եք հետևել ծրագրերի էջին կամ ֆեյսբուքյան էջին նորությունների համար:

ԻՐԻՍ ԲԻԶՆԵՍ ԻՆԿՈՒԲԱՏՈՐ

Կազմակերպության մասին

ԻՐԻՍ բիզնես ինկուբատորը հայկական նորաստեղծ կազմակերպություն է, որը սիրիահայ և տեղացի ձեռնարկատերերին տրամադրում է բիզնեսի զարգացման ծառայությունների ամբողջական շղթա, ներառյալ դասընթացներ, քոուչինգ, մենթորինգ, ինչպես նաև ֆինանսավորում՝ դրամաշնորհների և փոխառությունների միջոցով:

ԵՄ ԻՐԻՍ բիզնես ինկուբատորն ստեղծվել է 2019 թ-ին «Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ-ի և «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի կողմից՝ «Սիրիահայերի և տեղացիների դիմակայունության բարձրացում» (ԻՐԻՍ) ծրագրի շրջանակում: Ծրագիրը ֆինանսավորվում է Ի պատասխան սիրիական ճգնաժամին ստեղծված ԵՄ տարածաշրջանային Թրասթ ֆոնդի (ՄԱԴԱԴ ֆոնդ), Ավստրիական զարգացման համագործակցության և Ավստրիական Կարմիր խաչի կողմից և իրականացվում է Ավստրիական Կարմիր խաչի ղեկավարած կոնսորցիումի կողմից, որի անդամներն են Հայկական Կարիտասը, Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ն և «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ն:

ԻՐԻՍ Բիզնես ինկուբատորի նպատակն է դառնալ ստարտափների ապագա սերունդների կայուն զարգացման գործիք և նորարարական մոտեցումների միջոցով խթանել ձեռնարկատիրական մշակույթի զարգացումը Հայաստանում:

Հնարավորություններ

Վերոնշյալ թիրախ խմբերի համար ԻՐԻՍ բիզնես ինկուբատորն առաջարկում է ինկուբացիայի երեք ծրագիր՝ Spark, Build, Start, համապատասխանաբար իր երեք թիրախ խմբերի համար՝ ինքնազբաղվածներ, ՓՄՁ ոլորտում գործող ստարտափներ և փոքր և միջին ձեռնարկություններ: Ինկուբացիայի ամբողջական շղթան շուրջ մեկ տարի է՝ կախված ծրագրից:

Յուրաքանչյուր տարի ԻՐԻՍ բիզնես ինկուբատորը հանդես է գալու հայտադիմումների ընդունման երկու փուլով: Մանրամասն տեղեկատվությունը հրապարակվում է ԻՐԻՍ բիզնես ինկուբատորի կայքում և ֆեյսբուքյան էջում, ինչպես նաև հիմնադիր կառույցների կայք էջերում:

«ԿԱԶԱ» ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

KOMITAS ACTION SUISSE - ARMÉNIE

Կազմակերպության մասին

«ԿԱԶԱ» Հիմնադրամն իր գործունեության 23 տարիների ընթացքում ծրագրեր է իրականացրել 5 ոլորտներում՝ մարդասիրական, շինարարական, կրթական, գյուղատնտեսական և զբոսաշրջության:

Այսօր Հիմնադրամը ձգտում է ընդառաջ գնալ հայ հասարակության նոր պահանջմունքներին: Այդ պատճառով է, որ «ԿԱԶԱ»-ի հիմնած երիտասարդական կենտրոններում, որոնք գործում են Երևանում և Գյումիրում, 2008 թ.-ից ի վեր շեշտը դնում ենք կրթական և վերապատրաստման առկա և հեռավար ծրագրերի վրա՝ նպաստելու համար քաղաքացիական հասարակության առաջխաղացմանը և երկրի երկարատև ու ներդաշնակ զարգացմանը: Բացի այդ, մենք մեր ուժերը ներդնում ենք մարդակենտրոն զբոսաշրջության զարգացման ուղղությամբ, որը միտված է Հայաստանի մշակութային և մարդկային հարստությունների բացահայտմանը:

Հիմնադրամն առանձնահատուկ կարևորություն է տալիս բաց և ինքնուրույն քաղաքացիներից կազմված այնպիսի հասարակության կայացմանը, որի անդամները հանձն են առնում էական փոփոխությունների դերակատարներ լինել արագ զարգացող ժամանակակից աշխարհում:

Հնարավորություններ

«Հայաստանի երիտասարդ քաղաքացիներ. քաղաքացիական կրթության խթանում սոցիալական նորարարության միջոցով»

Ծրագրի նպատակն է նպաստել երիտասարդների մոտ ակտիվ, ներգրավված և լուծումներ առաջարկող քաղաքացու ինքնության զարգացմանը՝ խթանելով առավել ժողովրդավար և թափանցիկ հասարակության զարգացումը Հայաստանում: Ծրագրի շրջանակներում երիտասարդական հարթակներ են ձևավորվում Երևանում և ՀՀ յոթ մարզերում: Ծրագրին հնարավոր է մասնակցել որպես երիտասարդական հարթակների կամավոր-առաջնորդ և որպես անդամ:

Զբոսավարների պատրաստման դասընթաց

Վեց ամիս տևողությամբ դասընթաց է, որի ընթացքում ուսումնասիրվում է ավելի քան 15 առարկա: Այն բաղկացած է առկա դասերից, գործնական աշխատանքներից, թանգարաններ և տեսարժան վայրեր այցերից և առցանց բաղադրիչից, որն այն առավել հասանելի է դարձնում ժամանակի կամ տեղաշարժման սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց համար: Դասընթացը նախատեսված է որևէ օտար լեզվի տիրապետող և զբոսավարին անհրաժեշտ գիտելիք և հմտություններ ձեռք բերել ցանկացող անձանց համար:

Ճանապարհ դեպի աշխատանք

Ծրագրի շրջանակներում ներգրավվում են աշխատաշուկայում որոշակի փորձ ունեցող և իրենց գիտելիքներով ու հմտություններով կիսվելու պատրաստ երիտասարդ կամավորներ: Կամավորները 4 ամսվա ընթացքում ուղղորդում են աշխատանք փնտրող երիտասարդներին աշխատանքի որոնման հարցերում: Կամավորները և ծրագրի մասնակիցները միասին մասնակցում են դասընթացաշարի, որն ուղղված է անձի համընդհանուր և աշխատանքային հմտությունների բարելավմանը: Ծրագրին կարելի է մասնակցել որպես կամավոր-մենթոր կամ որպես մասնակից:

Փախստականների ինտեգրում կրթության միջոցով

Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանում ապաստան հայցող և փախստական անձանց սոցիալ-մշակութային և սոցիալ-տնտեսական ինտեգրմանը: Ծրագիր սոցիալ-մշակութային բաղադիրչը հնարավորություն է տալիս կամավորներին վարել մշակութային, ստեղծագործական, կրթական, հմտությունների զարգացման, իրազեկվածության բարձրացման ակումբներ տեղահանված անձանց համար:

ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ

CareerCenter.am

Կազմակերպության մասին

CareerCenter.am հարթակի նպատակն է բարձրացնել հանրության տեղեկացվածության աստիճանը՝ նրանց ընձեռելով տեղական և արտասահմանյան կազմակերպություններում առկա աշխատատեղերի, կարիերայի և մասնագիտական հմտությունների զարգացման վերաբերյալ տեղեկությունների արագ, անվճար, հեշտ և արդյունավետ ստանալու հնարավորություն: Այս կայքը գործատուների և աշխատանք փնտրողների հանդիպման միասնական և ամբողջական հարթակ է, որտեղ երկու կողմերին էլ առաջարկվում են իրենց նպատակին հասնելու գրեթե բոլոր գործիքները, որոնք ժամանակի ընթացքում ավելի ու ավելի են կատարելագործվում:
CareerCenter.am հարթակի սկզբունքները հիմնված են այնպիսի կարևոր հիմնասյուների վրա ինչպիսիք են հավասար հնարավորությունների խթանումը, տեղեկատվության մատչելիությունը, ճշտվածությունը և այլն, որպեսզի դիմորդը դիմելու, հետագա աշխատանքի կամ կրթության ընթացքում չհանդիպի որևէ անսպասելի կամ տհաճ խնդիրների կամ խոչընդոտների: Այսպիսով, մենք ցանկանում ենք Հայաստանում խթանել առողջ գործատու և աշխտակից փոխհարաբերությունների մշակույթը, որպեսզի արդյունքում ունենանք առողջ ու կայուն աճող կազմակերպություններ իրենց աճող աշխատատեղերով և կրթական հնարավորություններով:
Մենք հավատում ենք, որ յուրաքանչյուրի մասնակցությունը անհրաժեշտ է առողջ հասարակության կառուցման գործում և անում ենք հնարավորը՝ ի նպաստ հավասար հնարավորությունների խթանմանը:

Հնարավորություններ

Աշխատանք

Անհատները հնարավորություն ունեն մեր կայքի միջոցով փնտրել աշխատանք, կամավորության հնարավորություն, կրթական ծրագրեր, ինչպես նաև պատրաստել առցանց ինքնակենսագրական (ռեզյումե), առցանց դիմել աշխատանքի կամ ինքնակենսագրություն ուղարկել այլ տեղ, ստանալ իրենց հետաքրքրող հայտարարությունները կայքում բաժանորդագրության՝ էլեկտրոնային փոստի միջոցով, և այս ամենը ԱՆՎՃԱՐ հիմունքներով:
Գործատուները հնարավորություն ունեն տեղադրել հայտարարություններ իրենց ընկերությունում առկա թափուր աշխատատեղերի, կրթական և կամավորության հնարավորությունների, նորությունների և այլնի վերաբերյալ, ինչպես նաև առցանց ռեզյումեների բազայում փնտրել իրենց անհրաժեշտ թեկնածուին:
Գործատուներին առաջարկում ենք նաև աշխատակազմի անմիջական հավաքագրման ծառայություն, ինչպես նաև Ռեզյումեների բազան ուսումնասիրելու և ցանկալի թեկնածուներին արագ գտնելու հնարավորություն:

Դասընթացներ

Կարիերայի կենտրոնը անհատներին և կազմակերպություններին առաջարկում է նաև Անգլերեն և Ռուսերեն լեզուների ուսուցման մասնագիտական բարձրակարգ դասընթացներ, որոնք նպատակաուղղված են իրական գիտելիքներ ստանալուն:

CareerCenter.am կայքում այժմ առկա են և շարունակ թարմացվում են բազմաթիվ աշխատանքի, կամավորության, կրթական և այլ հնարավորություններ:

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կազմակերպության մասին

«Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» հիմնադրվել է 2009 թվականին ՀՀ Լոռու մարզի Ալավերդի քաղաքում և մինչև այսօր իրականացրել է ավելի քան 30 ծրագրեր տարբեր ոլորտներում: Ներկա պահին կազմակերպությունը աշխատում է ՀՀ 8 մարզերում:

Կազմակերպության հիմնական գործընկերներն են հանդիսացել Եվրապական միության հանձնաժողովը, Վորլդ Վիժն ՄԲԿ Հայաստանյան գրասենյակը, Հայաստանում Ամերիկայի միացյալ նահանգների դեսպանությունը, Չեխիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը և այլ կազմակերպություններ: Կազմակերպությունը ծրագրեր է իրականացնում համայնքային, մարզային, ազգային և միջազգային մակարդակներում:

Կազմակերպության հիմնական գործունեության ոլորտներն ու ուղղություններից են մարդու իրավունքների պաշտպանությունը, երեխաների իրավունքների պաշտպանությունը, համայնքային զարգացումը, ֆորմալ ու ոչ ֆորմալ կրթությունը և այլն:

Հնարավորություններ

ERASMUS+ և այլ երիտասարդական նախաձեռնություններ

Erasmus+ և այլ երիտասարդական ծրագրերի շրջանակներում կազմակերպությունը հնարավորություն է տալիս երիտասարդներին զարգացնել իրենց անհատական և թիմայի զարգացումը, միջմշակութային կրթությունը և ճանաչելիությունը:

Կազմակերպությունը հնարավորություն է տալիս մարզային երիտասարդներին մասնակցել Հայաստանում և արտերկրում իրականացվող ոչ ֆորմալ և միջմշակութային կրթության դասընթացներին և փոխանակման ծրագրերին:

Եվրոպական համերաշխության կորպուս

Եվրոպական Համերախության Կորպուսի շրջանակներում իրականացվող ծրագրերով կազմակերպությունը հնարավորություն է ընձեռնում երիտասարդներին կամավորական աշխատանք կատարել ԵՄ երկրներում, զարգացնել միջմշակութային հաղորդակցման և մասնագիտական զարգացման հմտությունները:

Նույն ծրագրերի շրջանակներում Հայաստանում իրականացնում է երիտասարդների անգլերեն լեզվի բարելավման, նկարչական հմտությունների զարգացման, մասնագիտական կողմնորոշման, ոչ ֆորմալ և միջմշակութային կրթության վերապատրաստումներ և միջոցառումներ:

Էկո-դպրոց և էկոլոգիական ծրագրեր

Կազմակերպությունը իրականացնում է էկոլոգիական ծրագրեր տարբեր ուղղություններով: Էկոլոգիական ծրագրերի շրջանակներում երիտասարդներին հնարավորություն է տրվում ներգրավվել էկո-դպրոցի դասընթացներին, որտեղ տրամադրվում են էկոլոգիական կրթությանը, օրենսդրությանը վերաբերվող գիտելիքներ, ինչպես նաև զարգացվում է երիտասարդների այլընտրանքային ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հմտությունները

ՀԱՅ ԱՌԱՋԱԴԵՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ ՀԿ

Կազմակերպության մասին

Հայ առաջադեմ երիտասարդություն հասարակական կազմակերպությունը ստեղծվել է 2009 թվականին՝ նպատակ ունենալով ներգրավել երիտասարդներին ժողովրդավարական պետության կառուցման գործում, նպաստել երիտասարդների ինքնազարգացմանը, ակտիվ մասնակցությանը, կարողությունների և գիտելիքների զարգացմանը և աջակցել երիտասարդների ներգրավվածությանը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:
Կազմակերպության հիմնական նպատակն է ներգրավել երիտասարդներին հասարակական, քաղաքական, քաղաքացիական և տնտեսական կյանքում, ակտիվացնել երիտասարդներին քաղաքացիական հասարակության կայացման գործում և նպաստել Հայաստանում ոչ ֆորմալ կրթության և կամավորության մշակույթի զարգացմանը:
Իր տեղական և միջազգային կրթական ծրագրերի միջոցով կազմակերպությունը հարյուրավոր երիտասարդների համար ստեղծում է ինքնազարգացման և կատարելագործման հնարավորություններ:
Կազմակերպության տեսլականն է ձևավորել հասարակություն, որտեղ երիտասարդներն ունեն ակտիվ մասնակցություն ժողովրդավարական գործընթացներին և որոշումների կայացմանը, քաղաքացիական հասարակությունը զարգացած է և հանդիսանում է սոցիալական և քաղաքական փոփոխությունների շարժիչ ուժ:

Հնարավորություններ

Կամավորների հավաքագրման մոդել

Կազմակերպությունը մշակել է կամավորների հավաքագրման արդյունավետ մոդել, որի շնորհիվ երիտասարդները հնարավորություն են ստանում 6 ամիս անցկացնել կազմակերպությունում, ներգրավվել ընթացիկ ծրագրերում, իրականացնել սեփական նախաձեռնությունները և զարգացնել իրենց հմտությունները:
Ծրագրի նպատակն է խթանել հայ երիտասարդների մասնակցությունը երիտասարդական ծրագրերում, ինչպես նաև համայնքի կյանքում: Կամավորները ներդնում են իրենց ժամանակը և մասնագիտական հմտությունները՝ ի շահ կազմակերպության ու համայնքի՝ միևնույն ժամանակ զարգացնելով իրենց անձնային և մասնագիտական հմտությունները:

Միջազգային կամավորական ծրագրեր

Հայ առաջադեմ երիտասարդություն ՀԿ-ը հանդիսանում է Եվրոպական կամավորական ծառայության (ԵԿԾ) շրջանակներում ուղարկող և ընդունող կազմակերպություն: Ծառայությունը միջազգային շարժունության ծրագիր է, որը երիտասարդներին հնարավորություն է տալիս իրենց ուժերն ի սպաս դնելու ընդհանուրի բարօրությանը միտված որևէ ծրագրի (մարդասիրական, հասարակական, մշակութային, շրջակա միջավայրի պահպանության) արտերկրում՝ միաժամանակ նոր մշակույթ բացահայտելով: Մաս կազմելով Եվրամիության «Էրազմուս +» ծրագրի՝ այն փորձում է երիտասարդների շրջանում զարգացնել համերաշխություն, փոխհասկացողություն և հանդուրժողականություն՝ նպաստելու համար ԵՄ-ում սոցիալական միասնության ուժեղացմանը և երիտասարդների ակտիվ քաղաքացիական ներգրավվածությանը: Ծրագրերի մասին կարող եք ծանոթանալ այստեղ:

«Գտի՛ր գործ, ստեղծի՛ր գործ» կարիերայի և ձեռնարկատիրության դպրոց

Դպրոցի նպատակն է Երևանում և հարակից քաղաքային ու գյուղական համայնքներում բնակվող Սիրիահայերին և տեղաբնակ անձանց տրամադրել հմտությունների և կարողությունների զարգացման հնարավորություններ: Դպրոցը խմբային դասընթացների, քննարկումների, գործնական վարժությունների, ինչպես նաև դասընթացավարի կողմից անհատական խորհրդատվության միջոցով խթանում է մասնակիցների անձնային և մասնագիտական զարգացումը՝ խրախուսելով նրանց մասնագիտական աճը և ներգրավվածությունը ձեռնարկատիրական ոլորտում:

«ՀԿ ԿԵՆՏՐՈՆ» ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԿ

Կազմակերպության մասին

Բարի կամքի հիմքով մասնակցությունն ու պատասխանատվությունը՝ հանուն անհատի և ընդհանուր բարօրության ՀԿ Կենտրոնի տեսլականի ոգին ու շունչն են: Կազմակերպության առաքելությունն է՝
Սատարել քաղաղացու մասնակցությունը երկրի զարգացման գործընթացներում՝ կարողությունների համալիր և շարունակական ընդլայնման միջոցով:
Խնդիրներն են՝

- Խթանել քաղաքացու և քաղաքացիական հասարակության կառույցների/խմբերի մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում:
- Աջակցել սոցիալական գործընկերություն հաստատմանը:
- Խթանել քաղաքացիական հասարակության զարգացման գործընթացները:
- Աջակցել քաղաքացու և քաղաքացիական հասարակության կառույցների/խմբերի կարողությունների զարգացմանը:

Հնարավորություններ

«Վանաձոր ԻնֆոՏուն» ծրագիր

Վանաձոր Ինֆոտունը 2011 թվականից ի վեր Լոռու մարզում ձգտում է բարձրացնել հասարակության տեղեկացվածության և մեդիագրագիտության մակարդակը: Ինֆոտունը հնարավորություն է ընձեռնում լրատվության և ինֆորմացիայի ձեռքբերման ավանդական միջոցներից անցում կատարել դեպի նոր սոցիալական մեդիա, որն ապահովում է ինֆորմացիալի ավելի մեծ հասանելիություն, միևնույն երևույթի՝ տարբեր տեսանկյուններից դիտարկում, կարիքների ու հիմնախնդիրների վերհանման, ինքնարտահայտման և կարծիքների փոխանակման լայն հնարավորություն:
Ծրագրի նպատակն է՝ նպաստել Լոռու մարզում քաղ.լրագրության զարգացմանն ու մեդիագրագետ հասարակության ձևավորմանը և դրա միջոցով խթանել ՀՀ-ում տեղի ունեցող բարեփոխումների գործընթացի մասին տեղեկատվության և հանրային մասնակցության բարձրացմանը:

«ՏՈՒԿ- Տուրիզմի ուրույն կենտրոն» սոցիալական ձեռնարկություն

ՏՈՒԿ-ը Դսեղ գյուղում գտնվող տուրիստական կենտրոն է, որը հնարավորություն է տալիս տարբեր մարդկանց իրենց հանգիստն անց կացնել գյուղում և նպաստել այդ գյուղի զարգացմանը: ՏՈՒԿ-ում երիտասարդները հնարավորություն ունեն ներգրավվելու որպես կամավոր կամ ջոկատավար, ստանալ բազմաթիվ գիտելիքներ և հմտություններ:

«ՀԱՄԱՏԵՂ» ծրագիր

«Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀԱՄԱՏԵՂ) ծրագիրը հնգամյա գործընթաց է, որի նպատակն է բարձրացնել հանրային մասնակցության աստիճանը ապակենտրոնացման և տեղական ինքնակառավարման բարեփոխումներում: Ծրագիրը քաղաքացիներին տրամադրում է վստահելի տեղեկատվություն և հզորացնում քաղաքացիական հասարակությանը՝ արդյունավետ, հաշվետու և մասնակցային տեղական ինքնակառավարումը խթանելու նպատակով: ՀԱՄԱՏԵՂ ծրագրի շրջանակներում ՀԿ Կենտրոնը համագործակցում է Վանաձոր, Սպիտակ, Դսեղ, Մարգահովիտ, Գյուլագարակ, Լոռի Բերդ և Լոռու մարզի այլ համայնքների երիտասարդների հետ՝ զարգացնելով վերջիններիս գիտելիքներն ու կարողությունները Տեղական ինքնակառավարման և ավանդական ու նոր մեդիայի ոլորտներում:

ՄԱԿ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ «ԿԱՆԱՅՔ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ» ԾՐԱԳԻՐ

Կազմակերպության մասին

Միացյալ Թագավորության «Լավ կառավարման հիմնադրամի» ֆինանսավորմամբ՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը, «ՕքսԵՋԵն» հիմնադրամի և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների (ՏԿԵ) նախարարության հետ համատեղ, իրականացնում են «Կանայք քաղաքականության մեջ» ծրագիրը: Ծրագրի նպատակն է ուժեղացնել կանանց մասնակցությունը քաղաքականության մեջ՝ հատուկ շեշտադրելով կանանց և երիտասարդների ներկայացվածությունն ու մասնակցությունը համայնքային զարգացման գործընթացներում:

Հնարավորություններ

«Համայնքը ԵՍ եմ»

18-30 տարեկան երիտասարդներ՝ Հայաստանի բոլոր մարզերի ոչ խոշորացված համայնքներից

Ծրագրի շրջանակներում տարին 2 անգամ՝ ամառային և ձմեռային արձակուրդների ժամանակ իրականացվում են «Համայնքը ԵՍ եմ» երիտասարդական առաջնորդության ճամբարները, որոնց նպատակն է խթանել առաջնորդությունը երիտասարդների շրջանում և դարձնել նրանց համայնքային զարգացման գործընթացների ակտիվ մասնակիցը և նախաձեռնողը: Դասընթացների ավարտից հետո եռամսյա ժամկետում շրջանավարտներին առաջարկվում է պլանավորել և իրականացնել համայնքային փոքր նախաձեռնություն՝ առանց որևէ ֆինանսական աջակցության ՄԱԶԾ-ի կողմից:

Ավագ դպրոցականների առաջնորդության դպրոցներ

16-18 տարեկան պատանիներ՝ Հայաստանի բոլոր մարզերի ոչ խոշորացված համայնքներից

Ծրագրի հիմնական ուղղություններից մեկն է պատանիների և երիտասարդների շրջանում առաջնորդական հմտությունների խթանումը՝ համայնքային զարգացման գործընթացներում ակտիվ մասնակցություն ցուցաբերելու նպատակով: Ավագ դպրոցականների առաջնորդության դպրոցների ժամանակ պատանիներն ուսումնասիրում են տեղական ինքնակառավարման, մասնակցային ժողովրդավարության և ընտրությունների, հավասար իրավունքների և հնարավորությունների հիմունքները, ինչպես նաև ծրագրային կառավարման և ֆոնդահայթայթման ուղղված թեմաներ: Դասընթացների ավարտից հետո եռամսյա ժամկետում շրջանավարտներին առաջարկվում է պլանավորել և իրականացնել համայնքային փոքր նախաձեռնություն՝ առանց որևէ ֆինանսական աջակցության ՄԱԶԾ-ի կողմից:

DEMO Co-Design Lab

ՔՀԿ, ՏԻՄ, կառավարության, նախաձեռնող խմբերի ներկայացուցիչների, երիտասարդների և փորձագետների համար, տարին 2 անգամ

«Դեմո» լաբերն իրենցից ներկայացնում են ծրագրերի համատեղ մշակման գործընթաց, որի ընթացքում տարբեր ոլորտային մասնագետներ, երիտասարդներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ համատեղ մշակում և զարգացնում են նախապես ընտրված 3-5 ծրագրային գաղափար, որոնք նպաստելու են համայնքային մակարդակում մասնակցային որոշումների կայացման գործընթացներին: Ըստ ծրագրի չափանիշների գաղափարները պետք է լինեն նորարար և պետք է նպաստեն համայնքում ավելի թափանցիկ, մասնակցային և ժողովրդավար որոշումների կայացման գործընթացներին: ՄԱԶԾ-ն տրամադրում է փոքրիկ գրանտեր մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված ծրագրերի իրականացման համար:

ՄԱԿ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ ԿՈԼԲԱ ԼԱԲ

Կազմակերպության մասին

Կոլբա Լաբը ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ներսում գործող սոցիալական նորարարարության լաբորատորիա է, որն իրականացնում է տարաբնույթ ծրագրեր՝ մշտապես փորձարկելով ծրագրերի դիզայնի և իրականացման նորարարարական մոտեցումներ և մեթոդներ: Կոլբա լաբի կողմից նախկինում հավաքագրված և ինկուբացված ստարտափ ծրագրերը տարբեր ոլորտների էին վերաբերվում՝ մարդու իրավունքներ, կլիմայի փոփոխություն, բաց տվյալների օգտագործումը սոցիալական ծրագրերում և այլն: Սոցիալական ստարտափերի ինկուբացիային զուգահեռ Լաբն աշխատում է պետական հատվածի նորարարների հետ՝ բաց կառավարման գործընկերության շրջանակում, աջակցելով հանրային ծառայությունների մարդակենտրոն մշակմանը և նորարար գաղափարների իրականացմանը:

2019թ.-ից մեկնարկել է «Ապագայի հմտություններ և աշխատատեղեր» ծրագիրը, որն ուղղված է Հայաստանի մարզերում ապրող երիտասարդների շրջանում այնպիսի հմտությունների զարգացմանը, որոնք կօգնեն մրցունակ լինել ապագայի աշխատաշուկայում: Առավել մանրամասն ծրագրի մասին, կարդացեք այստեղ: Այս ծրագրերի և պարբերաբար իրականացվող միջոցառումների մասին կարող եք տեղեկանալ լաբի առցանց ալիքներում:

Հնարավորություններ

Նորարար գաղափարների (սոց. սպարտափների) մրցույթներ

2020թ.-ին Լոռու, Շիրակի, Գեղարքունիքի և Տավուշի երիտասարդների համար: Յուրաքանչյուր մարզում կհայտարարվեն նորարար գաղափարների մրցույթներ մի շարք հեռանկարային ոլորտներում՝ բարձրարժեք գյուղատնտեսություն և սննդի վերամշակում, ստեղծարար ոլորտ, տուրիզմ:

Մանրամասները՝ Լաբի կայքում:

Վճարովի պրակտիկա

2020թ.-ին Լոռու, Շիրակի, Գեղարքունիքի և Տավուշի երիտասարդների համար 3-ից 6 ամսիս տևողությամբ վճարովի պրակտիկայի հնարավորություններ մարզային գործատուների մոտ: Յուրաքանչյուր մարզի համար առաջնային և հեռանկարային ոլորտներում կհայտարարվեն պրակտիկայի հնարավորություններ՝ երիտասարդները կընտրվեն մրցութային կարգով:

Մանրամասները՝ շուտով Լաբի կայքում:

Կազմակերպությունն ունի ֆեյսբուքյան էջ, թվիտերյան էջ, ինչպես նաև իր էջը medium.com-ում:

ՄԵԴԻԱ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Կազմակերպության մասին

Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը Հայաստանի մեդիադաշտում աշխատում է ավելի քան 20 տարի: Կենտրոնն աջակցում է արտահայտման ազատությանը, անկախ լրատվամիջոցների կայացմանը, զարգացմանը, մասնակցում մեդիա օրենսդրության բարելավմանը և լրագրողների իրավունքների պաշտպանությանը:
ՄՆԿ-ն նաև մեդիա արտադրության բազմամյա փորձ ունի՝ մի քանի հազարի հասնող վավերագրական ֆիլմեր, տեղեկատվական հոլովակներ և սոցիալական գովազդներ:

Հնարավորություններ

Դասընթացներ

Մեդիա Նախաձեռնությունների կենտրոնն անցկացրել է 800-ից ավել մեդիա դասընթացներ, որոնց մասնակցել են շուրջ 4000 լրագրողներ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, ուսուցիչներ, ուսանողներ և աշակերտներ: Դասընթացներն ընդգրկում են մեդիայի տարբեր ոլորտները՝ ավանդական լրագրությունից մինչև նորագույն մեդիա տեխնոլոգիաներ, հարթակներ, ժանրեր, ձևաչափեր, ուշագրավ մեդիա արտադրանք թողարկելուց մինչև գրագետ մեդիա արտադրանք սպառելը:

Դասընթացների վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար կարող եք հետևել կենտրոնի ֆեյսբուքյան էջին, իսկ ծրագրերին որպես կամավոր միանալու համար անհրաժեշտ է նամակ ուղարկել կազմակերպության էլ.հասցեին:

Յութուբ հեռարձակում. երիտասարդ վլոգերների կարողությունների զարգմացման ծրագիր

Ծրագիրը նպաստում է հայերեն վիդեոբովանդակության զարգացմանը թվային հարթակներում: «Ես եմ մեդիան» վիդեոբլոգինգի դպրոցն անցկացվել է արդեն 2 անգամ և արդյունքում մոտ 30 երիտասարդ ստացել է գիտելիք և փորձ, ինչպես նաև սարքավորումներ՝ ավելի որակյալ արտադրանք ստեղծելու համար: Դպրոցների մասնակից վլոգերների արտադրանքը հասանելի է «Ես եմ մեդիան» յություբյան ալիքում:

«Լսիր ինձ հիմա. Հայաստանում փոդքասթինգի մշակույթի զարգացում» ծրագիր

Ծրագիրը Հայաստանում առաջին փորձն է խթանելու փոդքասթինգը՝ որպես մեդիա արտադրության և մեդիա սպառման նորարական միջոց: Արդեն կազմակերպվել է փոդքասթինգի 2 ճամբար, որոնց ընթացքում մասնագետներն աշխատել են ծրագրի մասնակիցների հետ և կիսվել իրենց գիտելիքով ու փորձով: «Լսիր ինձ հիմա» ծրագրի շրջանակներում ստեղծված փոդքասթները հասանելի են media.am-ի փոդքասթների հարթակում:

ՍԻՆԵՐՋԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ ՍԻՍԹԵՄԶ

Կազմակերպության մասին

Ավելի քան 200 աշխատակից ունեցող SS ոլորտի առաջատար ընկերություններից մեկը՝ Synergy International Systems ընկերությունը 1997թ-ից սկսել է իր լայնածավալ գործունեությունը: Ընկերությունը մասնագիտացած է տեղեկատվական և վերլուծական համակարգերի ստեղծման մեջ, որոնք նպաստում են ավելի քան 65 երկրների կառավարությունների և միջազգային կազմակերպությունների աշխատանքի արդյունավետությանը՝ դարձնելով վերջիններիս արդյունքներն առավել թափանցիկ, իսկ մարդկանց կյանքը՝ առավել բարեկեցիկ:
Գիտելիքի եւ փորձի փոխանցումը մեր կարեւորագույն Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (CSR) դրսեւորումներից է:

Հնարավորություններ

Ամառային SS դպրոց

Ընկերությունը մեծ ներդրում ունի նոր մասնագետների պատրաստման գործում: 2005 թվականից ի վեր տեխնիկական ֆակուլտետների ուսանողների համար կազմակերպում ենք անվճար ամառային SS դպրոց, որտեղ ուսանողները ձեռք են բերում պրակտիկ գիտելիքներ փորձառու մասնագետներից շատ ջերմ և ընկերական մթնոլորտում:

Ուսանողական շաբաթ

Ուսանողները ստանում են կիրառելի գիտելիքներ, հնարավորություն են ունենում ավելի լավ ծանոթանալ ոլորտին, առանձնահատկություններին: Մեր tech-talk-երն անցկացվում են ինչպես Երևանի, այնպես էլ Գյումրիի համալսարանների համապատասխան տեխնիկական ֆակուլտետներում:

Բուհերի հետ համագործակցություն

Կազմակերպությունը օժանդակում է ծրագրավորման ֆակուլտետների ուսումնական ծրագրերի խորհրդատվությամբ և քաջալերում մեր աշխատակիցների դասավանդումը: Այս ծրագիրը էապես նպաստում է բուհ-գործատու հարաբերությունների արդյունավետության բարձրացմանը:

Ամառային դպրոց պատանիների համար

Դպրոցը նախատեսված է 14-16 տարեկան, HTML-ի հիմունքներին տիրապետող պատանիներին սովորել UI/UX-ի, HTML5-ի, CSS-ի և Photoshop-ի հիմունքները: Ուսուցումը, ինչպես մնացած ծրագրերի դեպքում, անվճար հիմունքներով է:

Կարիերայի խորհրդատվություն դպրոցականներին

Աշնանային արձակուրդների ընթացքում կանցկացվեն բաց դռների օրեր՝ ծանոթանալու SS ոլորտի նորագույն ուղղություններին, SS ոլորտի հնարավորություններին և իրենց ապագայի հենասյունը դնել արդեն այսօր:

SS-ի հնարավորությունները ոչ տեխնիկականների համար

Այս ծրագիրը օգնում է ոչ տեխնիկական ուսանողների բացահայտել SS-ում իրենց հնարավորությունները՝ համագործակցելով ԵՊՀ Ռոմանագերմանագիտական բանասիրության ֆակուլտետի և Երևանի Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի հետ:

Կամավորական ծրագրեր

Ընկերությունը նաև տալիս է հնարավորություն անցնել պրակտիկա և ծավալել կամավորական գործունեություն իր ամենամյա տարբեր միջոցառումների շրջանակներում:

staff.am

Կազմակերպության մասին

staff.am-ն արհեստական բանականությամբ աշխատող ռեքրութմենթի և աշխատանքի որոնման առաջատար հարթակ է Հայաստանում:
Հարթակը թողարկվել է 2016թ. և այժմ համագործակցում է ավելի քան 2000 ընկերությունների հետ՝ հնարավորություն ընձեռելով երիտասարդներին և, առհասարակ, կարիերայի աճով հետաքրքրված մասնագետներին ծանոթանալ առաջարկվող կրթական ծրագրերին, ներգրավվել ինթերնշիփային աշխատանքներում, գտնել ցանկալի ընկերությունում համապատասխան աշխատանք և StaffBlog ու staff.am նախագծերի շնորհիվ օգտակար խորհուրդներ ստանալ տարբեր ոլորտներում փորձառու մասնագետների կողմից:

Հնարավորություններ

Աշխատանք

staff.am-ում հայաստանյան և միջազգային ընկերությունների կողմից առաջարկվում են մասնագիտական աշխատանքներ ծրագրավորման, որակի կառավարման, վեբ/գրաֆիկ դիզայնի, պրոդուկտի/նախագծերի կառավարման, սարքերի նախագծման, վաճառքի/սպասարկման, ադմինիստրատիվ/օֆիսային, տուրիզմի/HoReCa-ի, մարքեթինգի/գովազդի/PR-ի, հաղորդակցության/լրագրության, ֆինանսների կառավարման, կրթության, իրավական, առողջապահության, մարդկային ռեսուրսների կառավարման, արտադրության, բիզնեսի կառավարման, պետական և այլ մասնագիտական ոլորտներում: Աշխատանքի բոլոր հնարավորություններին ծանոթացեք այստեղ:
Օգտատերերը կարող են նաև ստեղծել օնլայն CV-ի միջազգային չափորոշիչներին համապատասխան ձևաչափով, ստեղծել աշխատանքի ծանուցումներ թափուր աշխատատեղերին առաջինը տեղեկանալու համար, ինչպես նաև դիմել աշխատանքի ընդամենը 1 click-ով՝ օգտվելով հարթակի վեբ կամ մոբայլ տարբերակից (IOS հավելված / Android հավելված):

Թրեյնինգներ

staff.am հարթակում հատուկ բաժին է հատկացված մասնագիտական թրեյնինգներին՝ կարևորելով շարունակական կրթությունը և մասնագիտական գիտելիքների կատարելագործումը: staff.am trainings հարթակում կարող եք գտնել ինչպես տեղական շուկայի կողմից առաջարկվող թրեյնինգներ, այնպես էլ միջազգային ճանաչված հարթակների օնլայն թրեյնինգները:
Ծանոթանալու և կրթական հնարավորություններից օգտվելու համար այցելեք այստեղ:

«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

World Vision ՀԱՅԱՍՏԱՆ

Կազմակերպության մասին

Վորլդ Վիժնը ծառայում է աշխարհի 100-ից ավել երկրներում՝ նպաստելով միլիոնավոր երեխաների և նրանց ընտանիքների բարեկեցությանը: Վորլդ Վիժնը Հայաստանում իր գործունեությունն սկսեց 1988 թվականի ավերիչ երկրաշարժից հետո՝ տրամադրելով հումանիտար աջակցություն: Մարդասիրական օգնությանը զուգահեռ՝ Վորլդ Վիժնը սկսեց իրականացնել արդեն զարգացման ծրագրեր:
2000-ին կրկին Գյումրիում մեկնարկեց «Երեխաների հովանավորության» ծրագիրը՝ սկիզբ դնելով համայնքների երկարաժամկետ զարգացմանն ուղղված աշխատանքներին: Այսօր Վորլդ Վիժն Հայաստանն ունի 15 գրասենյակ, և կազմակերպության զարգացման ծրագրերից անմիջականորեն օգտվում է 110000 երեխա երկրի ողջ տարածքում:

Հնարավորություններ

Կամավորություն մարքեթինգի բաժնում

ՎՎՀ Մարքեթինգի բաժինն իրականացնում է տարբեր ծրագրեր, այդ թվում տեղական հովանավորություն, տարբեր արշավների միջոցով ֆոնդահայթայթում, կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակներում կազմակերպությունների հետ համագործակցում՝ բարեգործական ծրագրերի իրականացմամբ:

Կամավորները կարող են մասնակցել հետևյալ (ոչ ամբողջական) գործողություններին.

- Բարեգործական արշավների ժամանակ ֆոնդահայթայթման գործընթացի առաջմղում (օրինակ՝ հասարակական վայրերում մեզ հետ միասին ներկայացնել արշավի նպատակը անհատներին)
- Նվերների փաթեթավորում և բաշխում Գաղտնի Ձմեռ Պապ արշավի շրջանակում
- Աջակցություն նամակագրության հարցում
- Աջակցություն բուկլետների, լուսանկարների և այլ տեղեկատվական նյութերի պատրաստման հարցում
- Աջակցություն մարքեթինգի տարբեր նախագծերի և նյութերի մշակմանը
- Անհրաժեշտության դեպքում մասնակցություն փակ և բացօթյա գովազդային միջոցառումներին, և այլն:

Կազմակերպությունն ունի ֆեյսբուքյան էջ և կայք: